Հավելված
ՀՀ վարչապետի 2020 թ.
հունիսի 30-ի N 760-Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	**Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը**	**Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը**	**Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը**	**Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը**	**Իրավական հիմքը**
1.	**«Ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները պետական մրցանակի հայցման ներկայացնելու կարգը, Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետները և դրանք քննարկելու կարգն ու ժամկետները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական մրցանակներ շնորհելու և հանձնելու կարգն ու ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ**	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2020 թվականի հոկտեմբեր 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	«ՀՀ պետական մրցանակների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մաս, 4-րդ հոդվածի 7-րդ մաս,8-րդ հոդվածի 2-րդ մաս, 10-րդ հոդվածի 2-րդ մաս

2.	**«Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիրներ ընտրող հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեի ձևավորման և գործունեության կարգերը, ինչպես նաև հանձնաժողովների կազմում ընդգրկվող հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, հասարակական կազմակերպություններից ընտրվող անդամների թափուր տեղերի համար մրցույթի անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգը սահմանելու մասին» ՀՀ կ**առավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2020 թվականի հոկտեմբեր 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	«ՀՀ պետական մրցանակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ, 13-րդ և 14-րդ մասեր
3.	«Գրականության և արվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտներում շնորհվող՝ Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկիրների վկայագրերի ձևը, դափնեկրի կրծքանշանի նկարագրությունը և ձևը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ձեռքբերման համար դափնեկրի վկայագրի ձևը, բարձր տեխնոլոգիաների բնագավառում համաշխարհային ներդրման համար դափնեկրի վկայագրի ձևը, դափնեկրի հուշամեդալի, հուշախորհրդանիշի նկարագրությունը և ձևը, Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական, Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրի դիպլոմի ձևը, պատվոնշանի ձևը և նկարագիրը, պատվոնշանը հավաստող հավաստագրի ձևը, ինչպես նաև դրամական պարգևների և դրամական միջոցների չափերը,	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2020 թվականի հոկտեմբեր 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	«ՀՀ պետական մրցանակների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասեր

	մրցանակակրի կողմից ստացված դրամական միջոցների օգտագործման համար օրենքով նախատեսված միջոցառումների համակարգման, վերահսկման, ինչպես նաև դրամական միջոցները մրցանակակրին փոխանցելու կարգը սահմանելու մասին» ՀՀ **կ**առավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ